ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Աշտարակ 2017թ.

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մարզն ընդգրկում է Աշտարակի, Ապարանի, Թալինի և Արագածի տարածաշրջանները՝ **114** համայնքներով (**3-ը՝ քաղաքային և 111-ը՝ գյուղական**): Բնակչությունը 01.01.2016թ.-ի դրությամբ կազմում է **129.8 հազ**. մարդ այդ թվում՝ քաղաքային **29.1 հազ**. մարդ **(22.4%),** գյուղական՝ **100.7 հազ.** մարդ **(77.6%):** ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը կազմում է **(4.3%):**

1.1. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱԿԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզի քաղաքաշինության ոլորտի հիմնախնդիրները կապված են բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հանրակրթական դպրոցների, առողջապահական, մշակութային, նախադպրոցական, մարզական օբյեկտների, բազմաբնակարան և վարչական շենքերի հիմնանորոգման, բնակարանաշինության, բնակավայրերի բարեկարգման, բազմաբնակարան շենքերի կառավարման գործին պետական աջակցության, ինչպես նաև քաղաքաշինական այլ խնդիրների հետ:
2016 թվականին ՀՀ Արագածոտնի մարզում ՀՀ պետական բյուջեի հաշվին, բարեգործական կազմակերպությունների, անհատ բարերարների և այլ ծրագրերի միջոցներով, ինչպես նաև մարզի համայնքների բյուջեներով իրականացվել է շուրջ **20 մլրդ. 126 մլն. 881 հազ. ՀՀ դրամի** շինարարական աշխատանքներ, որից՝ ՀՀ պետական բյուջեի միջոցներով կատարվել է **18 մլրդ 455 մլն 952 հազ. ՀՀ դրամի** շինարարական աշխատանք:

Բարեգործական կազմակերպությունների միջոցներով կատարվել է շուրջ **993 մլն 928 հազ. ՀՀ դրամի** շինարարարական աշխատանք:

Մարզի համայնքների բյուջեներից հատկացվել է՝ շուրջ **677 մլն.դրամ**:

2016թ-ին Քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից իրականացվել է հետևյալ աշխատանքները.

- Արագած համայնքի Արագածի թիվ 1 դպրոցի հիմնանորոգում՝ **100 մլն ՀՀ դրամ:** Դպրոցում սովորում է **238** աշակերտ:
- Քուչակ համայնքի մշակույթի տան շինարարության ավարտում՝ **20մլն ՀՀ դրամ:**
- Աշտարակ համայնքի մարզադպրոցի կառուցման ավարտ՝ **52 մլն ՀՀ դրամ:** Մարզադպրոց հաճախում է **290** սան:
- Քուչակ համայնքի Քուրակի դպրոցի շենք հիմնանորոգում՝ **25,090.5 հազար ՀՀ դրամ:** Դպրոցում սովորում է **198** աշակերտ:
- Վարդենիս համայնքի դպրոցի կառուցում՝ **419 մլն ՀՀ դրամ**: Դպրոցում սովորում է **91** աշակերտ:

Մարզում Մշակույթի նախարարության կողմից կատարվել է նաև եկեղեցիների վերանորոգման աշխատանքներ, վերանորոգվել են թվով 3 եկեղեցի, ընդհանուր գումարը կազմոմ **է 49 մլն ՀՀ դրամ:**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի/ՀՏԶՀ/ կողմից մարզի թվով 7 համայնքներում կատարվել է՝ մանկապարտեզների վերակառուցում և մեկ համայնքում մանկապարտեզի տեղակայում դպրոցի վերակառուցվող մասնաշենքում, ընդհանուր գումարը կազմում է **575,751.1** հազար ՀՀ դրամ:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ֆինանսավորմամբ կատարվել է՝ Ափնագյուղ համայնքի դպրոցի նախակրթարանի վերանորոգում՝ **2 078,4** հազ. ՀՀ դրամ, Ապարանի Բաղրամյան **43** վթարային շենքի փոխարեն նոր բնակելի շենքի կառուցում՝ **79 000,0** հազար ՀՀ դրամ և ՀՀ Արագածոտնի մարզի Եղնիկ համայնքում կառուցվող ջրագծի շինարարական աշխատանքների ավարտման համար համայնքին սուբվենցիայի տրամադրում՝ **6 000,0** հազար ՀՀ դրամ:

Մարզի համայնքների բյուջեներից հատկացվել է՝ շուրջ **677** մլն.դրամ այդ թվում՝ կապիտալ շինարարություն **528** մլն.դրամ և գույքի ձեռքբերում **149** մլն.դրամ:

ՀՀ կառավարության 2010թ. մարտի 4-ի թիվ 208-Ն որոշման պահանջներին համապատասխան մարզի համայնքապետերին առաջարկվել է համայնքների 2017 թվականի բյուջեներում նախատեսել ֆինանսական միջոցներ՝ համայնքների պարզեցված գլխավոր հատակագծերի մշակման համար: Աշտարակ քաղաքին հարակից Կարբի, Օհանավան, ՈՒշի, Սասունիկ, Օշական, Ոսկեվազ, Ոսկեհատ, Ագարակ, Փարպի, Բազմաղբյուր և Ղազարավան համայնքները, սեփական միջոցներով գլխավոր հատակագիծ պատվիրելու հնարավորություն չունենալու պատճառով, առայժմ բնակավայրի գլխավոր հատակագծեր չունեն: Դրանք պատմամշակութային նշանակության հին բնակավայրեր են և ունեն տուրիզմի զարգացման լայն հնարավորություններ: Քաղաքաշինական խնդիրների արդյունավետ լուծման և նյութական մշակութային ժառանգության պահպանման ապահովման նպատակով դիմել ենք ՀՀ Քաղաքաշինության պետական կոմիտե միջնորդելու ՀՀ կառավարությանը՝ միջոցներ հատկացնել ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքին հարակից Կարբի, Օհանավան, ՈՒշի, Սասունիկ, Օշական, Ոսկեվազ, Ոսկեհատ, Ագարակ, Փարպի, Բազմաղբյուր և Ղազարավան համայնքների տարածքներն ընդգրկող հատվածի տարածքային հատակագծման նախագիծ կազմելու համար:

1.1.1 ԲՆԱԿԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզի գյուղական համայնքների և քաղաքների բնակելի ֆոնդի **98%**-ը սեփականաշնորհված է: Բնակֆոնդի շահագործումը և սպասարկումը իրականացվում է սեփականատերերի կողմից: Բազմաբնակարան շենքերի կառավարումը գյուղական համայնքներում իրականացնում են համայնքները, Թալին քաղաքում՝ քաղաքապետարանը, Ապարան քաղաքում՝ 14 համատիրություն, Աշտարակ քաղաքում՝ բազմաբնակարան շենքերի սպասարկման բաժինը:

Բնակարանային ֆոնդի գույքագրման եղանակով դրանց անձնագրային տվյալների բազայի ստեղծման համար իրականացվել է Թալին, Աշտարակ, Ապարան և Արտենի համայնքների բնակելի շենքերի տվյալների հավաքագրման գործընթացը:

Հաշվետու ժամանակաշրջանում հետևողական աշխատանք է տարվել ազգաբնակչությանը մաքուր խմելու ջրով ապահովելու համար: Հաշվետու ժամանակշրջանում մարզում չի արձանագրվել սուր աղիքային հիվանդությունների բռնկման դեպք: Մարզի **42** համայնքում /այդ թվում երեք քաղաքների ջրամատակարարումը իրականացնում է <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ /39/, և <<Երևան ջուրը>> /3/, իսկ մնացած համայնքներինը /72/ իրականացնում են համայնքների լոկալ ջրաղբյուրներից:

Մարզի երեք քաղաքներում և գյուղական բնակավայրերում իրականացվում է աղբահանություն: Քաղաքներում այն իրականացնում են քաղաքապետարանին կից ստեղծված ձեռնարկությունները, իսկ գյուղերում՝ գյուղապետարանները: Մարզում գործում է Սասունիկի աղբավայրը, որտեղ կատարվում է աղբի վերամշակում և ծածկում «Էկո-Տեխ» ՍՊԸ-ի կողմից:

Աշտարակ քաղաքի և հարակից 22 բնակավայր աղբը տեղափոխվում է «Էկո-Տեխ» ՍՊԸ-ի կողմից սպասարկվող Սասունիկի աղբավայր:

Մնացած բնակավայրերում գործում են պրիմիտիվ աղբավայրեր, որտեղ իրականացվում է աղբի կուտակում և այրում: Մարզում աշխատանքներ է տարվել աղբահանության կազմակերպման ուղղությամբ: Մարզպետի կարգադրությունների համաձայն մարզի բնակավայրերում սանիտարական վիճակը բարելավելու, աղբահանություն իրականացնելու և բարեկարգելու նպատակով անցկացվել են սանիտարական միամսյակներ, որի մասին գրավոր տեղեկացվել է բոլոր համայնքների ղեկավարներին:

Այդ ընթացքում համայնքներում իրականացվել են ինչպես սանմաքրման, աղբահանության, տարածքների բարեկարգման, այնպես էլ համայնքներ տանող ճանապարհների հարակից տարածքների մաքրման աշխատանքներ: Այդ աշխատանքները մեր կողմից տեղում ուսումնասիրվել և վերահսկվել են:

Քանի որ սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքները շարունակական են, ամբողջ տարվա ընթացքում դրանք մեր ուշադրության կենտրոնում են և հսկողության տակ: Մարզպետի հանձնարարությամբ ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցառումներ ջրամատակարարման–ջրահեռացման համակարգերի վիճակի բարելավման ուղղությամբ:

Այդ հանձնարարականը ևս գրավոր ներկայացվել է բոլոր համայնքների ղեկավարներին և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի Աշտարակի տեղամասի և Թալինի ու Ապարանի ենթատեղամասերի պետերին: Այդ աշխատանքները, ինչպես նաև խմելու ջրի վարակազերծման, ՕԿՋ-երի գլխամասերի պահպանման և արտաքին հոսքերի մուտքերը համակարգ կանխելու աշխատանքները մեր կողմից վերահսկվում են և գտնվում են մեր ամենօրյա ուշադրության կենտրոնում: Վարկային միջոցների հաշվին Թալինի տարածաշրջանի «չլկաններ» կոչվող ջրամատակարարման համակարգում ներդրվել է **14,6** մլն.դրամ,որտեղ կառուցվել է **2կմ** ցանկապատ, **23հատ** կապտաժ,ջրընդունիչ ավազան, **5հատ** մարիչ հորերի վերակառուցում:

«Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանոցների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջներով մարզի համայնքների գերեզմանոցների համար սահմանվել է իրավական հատուկ կարգավիճակ: Չափագրվել և քարտեզագրվել են բոլոր բնակավայրերի գերեզմանոցների տարածքները, կատարվել է գերեզմանատեղերի հաշվառում, համայնքների ղեկավարների կողմից կայացվել են գերեզմանատների իրավական հատուկ ռեժիմ սահմանելու մասին որոշումներ: Մեր կողմից գերեզմանատների և գերեզմանատեղերի սահմանների և հուղարկավորությունների կազմակերպման օրենքով սահմանված կարգը վերահսկվում է: Պարբերաբար տարածքային կառավարման և զարգացման նախարարություն և ՀՀ Քաղաքաշինության պետական կոմիտե ներկայացվել է տեղեկատվություն կատարված աշխատանքների մասին համաձայն կառավարության որոշմամբ հաստատված ձևերի և ժամանակացույցի: Համայնքի ղեկավարներին կրկին անգամ գրավոր առաջարկվել է սահմանված ժամանակացույցի համաձայն կատարել կառավարության որոշման պահանջները:

1.2. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1.2.1 ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2016թ. պետական բյուջեով Արագածոտնի մարզի մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ձմեռային և ամառային պահպանման և շահագործման աշխատանքների համար հատկացվել է **101.889.689** ՀՀ դրամ: Նշված ծրագրի շրջանակներում Արագածոտնի մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվում է **389.4կմ՝ 66.6** մլն.դրամ արժեքով ձմեռային պահպանության աշխատանքներ և նույն նշանակության **57կմ** ավտոճանապարհների ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքներ՝ **35.3** մլն.դրամ արժեքով:
ՀՀ 2016թ. պետական բյուջեով Արագածոտնի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ձմեռային և ամառային պահպանման և շահագործման աշխատանքների համար հատկացվել է **340.0** մլն.դրամ:

ՀՀ 2016 թ. պետական բյուջեի ֆինանսավորմամբ Արագածոտնի մարզում իրականացվել է.

1. 2015-2016թթ. Հ-21 –Հնաբերդ 1.926 կմ հատվածը 254.8 մլն ՀՀ դրամ արժեքով ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ:
2. ՀՀ 2016 թ. պետական բյուջեի ֆինանսավորմամբ Արագածոտնի մարզում իրականացվելու է Մ-3-Քուչակ-Արագած-Շենավան-Մ-3 մարզային նշանակաության ավտոճանապարհի հիմնանորոգում 141.0 մլն ՀՀ դրամ արժողությամբ: Աշխատանքներն ընթացքի մեջ են:
3. ՀՀ 2016 թ. պետական բյուջեի ֆինանսավորմամբ Արագածոտնի մարզում իրականացվելու է Մ3-Քուչակ-Եղիպատրուշ մարզային նշանակաության ավտոճանապարհի հիմնանորոգում 140.0 մլն ՀՀդրամ արժողությամբ:
4. Մ-1 Երևան-Լանջիկ միջպետական նշանակության Ա/Ճ-ի /Հյուսիս-Հարավ/ հատվածի վրա 2016թ ընթացքում կատարվել է 27 մլն դոլար կամ 12 մլրդ 960 մլն ՀՀ դրամ արժեքով աշխատանքներ Ասիական բանկի ֆինանսավորմամբ: Աշխատանքներն ընթացքի մեջ են:

1.2.2 ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Գազիֆիկացումը մարզի զարգացման կարևոր նախապայմաններից մեկն է: Երկարատև ձմեռները և այլընտրանքային էներգիայի աղբյուրների բացակայությունը ընդգծում են բնական գազի մատակարարման հրատապությունը համայնքների համար: Միաժամանակ գազի առկայությունը յուրաքանչյուր տնային տնտեսությունում հնարավորություն կտա տնտեսել կիսամյակում շուրջ 10-12 խ.մ. վառելափայտ, որն իր հերթին նշանակում է շրջակա միջավայրի էկոհամակարգի բարելավում:
Համայնքներում գերակայություն է համարվում գազամատակարարման ցանցի կառուցումը:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից նախատեսվել է իրականացնել գազատար ցանցերի ընթացիկ վերանորոգման, գազամատակարարման ռեժիմի կարգավորման աշխատանքներ:

01.06.2016թ.-ի դրությամբ մարզում գազաֆիկացված են 16576 բնակարան (կազմում է ընդ-հանուրի 51 %-ը), այդ թվում՝ 8102 բնակարանից 5142-ը գազաֆիկացված է (63.5%): 39073 առանձնատներից գազաֆիկացված է 11434-ը (38%):

Տարածաշրջանը	Բնակավայ-րերի թիվը	Ընդ. բաժանորդ	Այդ թվում	
			ԲԲԾ	Առանձնատուն
Աշտարակ	20	11520	3456	8064
Թալին	17	2006	930	1076
Ապարան	17	1985	820	1165
Արագած	9	1065+Սադունց	180	885
Ընդամենը	63	16576	5386	11190

Մարզի թվով **114** համայնքից **63** բնակավայրում կառուցված են գազատարներ: Փաստացի **63** համայնքում կան գազ սպառողներ, իսկ բաժանորդների թիվը կազմում է 16953: Մարզում «ԳՏՏՋ ԾԻԳ» ՊՀ-ի կողմից (ԻՖԱԴ) 2015-2016թ. ընթացքում Արագածավան-Արտենի համայնքներում իրականացվել է շուրջ **1,117.329.5** մլն.դրամի աշխատանքներ:
2016թ «ԳազպրոմԱրմենիաի» կողմից գազաֆիկացվել է Սադունց համայնքը:
Համայնքներում ընթացող գազաֆիկացման աշխատանքների արդյունքում 2016 թվականին կավելանան գազ սպառող համայնքների, ինչպես նաև բաժանորդների թվաքանակը:

1.2.3 ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ

Ոլորտի քաղաքականությունը հիմնականում ուղղված է բնակչությանը հասանելի, մատչելի և որակյալ խմելու ջուր մատակարարելու խնդրին, որն ուղղակիորեն կնպաստի մարզի բնակչության աղքատության նվազեցմանը:
Ոլորտում կատարվել են զգալի ներդրումներ, ներառյալ ջրամատակարարման առկա համակարգերի պահպանման և վերականգնման, ոլորտում գործող ընկերությունների կառավարման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև ջրամատակարարման համակարգերի արդիականացման համար:

Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ ՊՀ կազմակերպության, IFAD-ի և համայնքների համաֆինանսավորմամբ և բարեգործական կազմակերպությունների միջոցներով իրականացվել է ջրամատակարարման ներքին ցանցերի վերանորոգման և վերականգնման հետևյալ աշխատանքները՝

/հազ. ՀՀ դրամ/

Համայնք	Ֆինանսավորման աղբյուր	Աշխատանք	Գումարի չափը
Աղձք	IFAD-ի և համայնքների համաֆինանսավորմամբ	Աղձք համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	217,590.0
Արագած	ԻՖԱԴ	Արագած համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	695,020.0
Վարդենուտ	ԻՖԱԴ	Վարդենուտ համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	202,608.0

Բազմաղբյուր	ԻՖԱԴ	Բազմաղբյուր համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	208,802.0
Լուսագյուղ	ԻՖԱԴ	Խմելու ջրագծի կառուցում 14կմ	400,000.0
Շենավան	ԻՖԱԴ	Խմելու ջրագծի կառուցում 20կմ	585,000.0
Ագարակավան	ԻՖԱԴ	խմելու ջրագծի կաուցում 400մ	7,000.0
Մաստարա	ԻՖԱԴ	Արոտավայրի ջրարբիացման համակարգի կառուցում	86,000.0
Ալագյազ	<<Վերջին օրերի սրբեր>> բարեգործական կազմակերպություն	Խմելու ջրագծի կառուցում 1.8կմ	4,142.7
Բերքառատ	<<Վերջին օրերի սրբեր>> բ/կ	Խմելու ջրագծի կառուցում 2.1կմ	6,018.2
Ճարճակիս	<<Վերջին օրերի սրբեր>> բ/կ	Խմելու ջրագծի կառուցում 2.25կմ	4,639.4
Հարթավան	<<Վերջին օրերի սրբեր>> բ/կ	Խմելու ջրագծի կառուցում 1.74կմ	6,842.8
Սարալանջ	<<Վերջին օրերի սրբեր>> բ/կ	Խմելու ջրագծի կառուցում 1.5կմ	5,323.9
Երնջատափ	<<Վերջին օրերի սրբեր> բ/կ >	Խմելու ջրագծի կառուցում	6,110.8
Թթուջուր	<<Վերջին օրերի սրբեր>> բ/կ	Խմելու ջրագծի կառուցում 1.85կմ	5,314.2
Դավթաշեն	<<Վերջին օրերի սրբեր>> բ/կ	Խմելու ջրագծի կառուցում 24կմ	6,529.9
Թաթուլ	<<Վերջին օրերի սրբեր>> բ/կ	Խմելու ջրագծի կառուցում 1.5կմ	4,325.7
Ձորագլուխ	<<Վերջին օրերի սրբեր>> բ/կ	Խմելու ջրագծի կառուցում	5,570.3
Կաքավաձոր	<<Վերջին օրերի սրբեր>> բ/կ	Խմելու ջրագծի կառուցում	5,335.9

2016թ. մարզի ոռոգման համակարգում կատարվել են նորոգման և վերականգնման աշխատանքներ.

«Քասախ» ՋՕԸ-ի ոռոգման համակարգում վերանորոգման աշխատանքներ են իրականացվել **13.0** մլն.ՀՀ դրամի չափով, «Թալին» ՋՕԸ-ում կատարվել են ոռոգման համակարգի նորոգումներ՝ **53.0** մլն.ՀՀ դրամի չափով, «Շամիրամ» ՋՕԸ-ում կատարվել են ոռոգման համակարգի նորոգումներ **20.6** մլն.ՀՀ դրամի չափով, «Աշտարակ» ՋՕԸ-ում վերանորոգման աշխատանքներ են իրականացվել մոտ **23.2** մլն.ՀՀ դրամի չափով, «Փարպի» ՋՕԸ- ում վերանորոգման աշխատանքներ են իրականացվել մոտ **10.0** մլն.ՀՀ դրամի չափով, «Ապարան» ՋՕԸ-ում կատարվել են ոռոգման համակարգի նորոգումներ **3.7** մլն.ՀՀ դրամի չափով, 2016թ-ին մարզի ՋՕԸ-երի կողմից կատարվել է **123.5** մլն.դրամի վերանորոգում, իսկ 2015թ. այն կազմել է **108.256** մլն.ՀՀ դրամ:

Մարզպետն իր իրավասության սահմաններում հսկողություն է իրականացրել ոռոգման համակարգերի նորոգման, վերականգնման և մաքրման աշխատանքների նկատմամբ:
Վերանորոգվել է Թալին քաղաքի սելավատարը՝ մոտ **20** մլն.ՀՀ դրամ գումարով:

Հաշվետու ժամանակաշրջանում հետևողական աշխատանք է տարվել ազգաբնակչությանը մաքուր խմելու ջրով ապահովելու համար: 2016թ. մարզում չի արձանագրվել սուր աղիքային հիվանդությունների բռնկման դեպք: Մարզի **42** համայնքների /այդ թվում երեք քաղաքների ջրամատակարարումը իրականացնում է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ /39/, և «Երևան ջուրը» /3/, իսկ մնացած համայնքներինը /72/ իրականացնում են համայնքների լոկալ ջրաղբյուրներից:

1.3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Մարզում մշակովի հողատարածքների /վարելահող և բազմամյա տնկարկ/ ծավալը ընթացիկ տարում կազմել է 50357.1հա, իսկ 2015թ. այն կազմել է 47319.3հա:

Ընթացիկ տարում բազմամյա տնկարկների տակ զբաղեցված է 6581.8 հա նախորդ տարվա 6617 հա-ի փոխարեն (կարկտահարվել են 73.41 հա հատապտղի ցանքատարածքներ):

Ընթացիկ տարում ինտենսիվ մշակաբույսերի ցանքատարածությունների /բանջարեղեն, բոստան, տեխնիկական մշակաբուսեր, կարտոֆիլ/ ծավալները կազմել է 3443.3 հա, իսկ 2015թ. այն կազմում էր 3096 հա:

Հացահատիկային մշակաբույսերի արտադրության ծավալները կազմել է 92851.4 տ, նախորդ տարի այն կազմում էր 90599.1 տ:

Ընթացիկ տարում արտադրվել է 41250 տ կարտոֆիլ, իսկ նախորդ տարում՝ 45821.5 տ կարտոֆիլ:

Ընթացիկ տարում արտադրվել է 43885 տ բանջար-բոստանի, իսկ 2015թ-ին՝ 49498.2 տ բանջար բոստանի բերք:

Ընթացիկ տարում արտադրվել է 156.8 հազար տոննա խոտ, նախորդ տարվա 178.2 հազար տ. դիմաց:

Ընթացիկ տարում արտադրվել է 47552.7 տ պտուղ և հատապտուղ, նախորդ տարի այն կազմել է 95580.5 տ:
Ընթացիկ տարում արտադրվել է 5104.7 տ խաղող, նախորդ տարվա 17900 տ-ի դիմաց:

2016թ. բերքատվության անկումը պայմանավորված է հուլիսի 3-ին , հուլիսի 10-ին և օգոստոսի 3-ին մարզում տեղի ունեցան ուժեղ կարկտահարություններով: Կարկտահարվել են մոտ 854.8 հա խաղողի և 1656.1 հա պտղատու այգիներ,ինչպես նաև 1165.4 հա հացահատիկի

և 73.41 հա հատապտղի,7.05 հա բանջարեղենի և 10 հա ծխախոտի ցանքատարածքներ:Կարկտահարության պատճառած ընդհանուր վնասը կազմում է մոտ 7.148 մլրդ ՀՀ դրամ:

Մարզում 2016թ-ին առկա է 118055 պայմանական անասնագլխաքանակ, 2016թ. 118750 անասնագլխաքանակի դիմաց:

Համաձայն մարզի կողմից ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ներկայացված հայտի գարնանը՝ մարզին է հատկացվել 260 տոննա գարնանացան գարու(տրվել է 35 համայնքի,կատարվել է 1300 հա ցանքս), 4.5 տոննա առվույտի(տրվել է 33 համայնքի,կատարվել է 180 հա ցանքս), և 40 տոննա կորնգանի սերմացուներ(տրվել է 35 համայնքի,կատարվել է 266 հա ցանքս):

2016թ-ի մարզի 21 համայնքներում բարձրորակ սերմացուով աշնանացան ցորենի ցանքս է կատարվել 333.3 հա տարածության վրա:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության համապատասխան ստորաբաժանումների հետ համատեղ 25706հա տարածքներում իրականացվել է մոնիթորինգ, այդ թվում՝ 14064 հա մկնանման կրծողների տարածվածություն, որից 10679 հա-ի վրա պայքարի միջոցառում,
իսկ 50հա-ի վրա արդյունավետության որոշում, 4600հա պտղատու այգիներում տարբեր վնասատուների հաշվառում, 1500հա խաղողի այգիներում հիվանդությունների և վնասատուների հաշվառում, կատարվել է 400 հա հացահատիկային մշակաբույսերի ժանգերի, մրրիկների և վնասատուների հաշվառում, 3750 հա մորեխների տարածվածության հաշվառում, 220 հա օկնոգենա վնասատուի հաշվառում:

Միաժամանակ իրականացվել են վաճառքի անվանացանկից դուրս, ժամկետանց և անորակ թունանյութերի ուսումնասիրություններ: Մարզում գործում են լիցենզիա ունեցող 8 թունաքիմիկատների վաճառակետեր:Նախորդ տարվա համեմատությամբ գյուղատնտեսական հիմնական մթերքների ապրանքայնության մակարդակի բարձրացում:

Օպերատիվ տվյալներով ընթացիկ տարում մարզում գյուղատնտեսական հիմնական մթերքների ապրանքայնության մակարդակը կկազմի մոտ 73%, այդ թվում խաղողագործության բնագավառում մոտ 77.5%, պտղաբուծությունում 68%, կարտոֆիլը 75%, բանջար բոստանը 86.5%, կաթինը 68%, մսինը 75.5%, ձվինը 60.5%:
2015թ. ապրանքայնության ամփոփ մակարդակը կազմել է 72% :

Մարզպետարանի կողմից աջակցություն է ցուցաբերվել ֆերմերային տնտեսություններին ծիրանի, խաղողի և խնձորի թափուկի մթերման գործում, ինչպես նաև կաթի հանձման աշխատանքներում: 2016թ. ընթացքում մարզի կաթ արտադրողներից մթերվել է մոտ 6600տ կաթ:

Մարզում մթերող կազմակերպությունների հզորությունները ավելացել են ավելի քան 4%-ով:

Մարզի տարածքում գործում են «Թամարա ֆրութ», «Իշխան» ՍՊԸ, «Աշտարակ կաթ» ՓԲԸ, «Օշականի գինու գործարան» ԲԲԸ, Սասունիկի «Արմենիա վայն» և Ոսկեվազի «Հայասի» գինու-կոնյակի, Ոսկեվազի «գինու-կոնյակի», Կոշի «Գոլդն-Գրեյփ-Արմաս» ՍՊԸ գինու–կոնյակի գործարանները:

Մարզում գործում են ևս երեք վերամշակող ձեռնարկություններ՝ Բազմաղբյուր համայնքում «Վարգո ֆուդ» ՍՊԸ, Կարբի համայնքում «Կարբի ֆրութ» ՍՊԸ-ն, որոնք զբաղվում են պտուղ-բանջարեղենի վերամշակությամբ և Սասունիկի «Վան Արդի» ՍՊԸ-ն,որը զբաղվում է գինու արտադրությամբ:

Մարզի Ոսկեվազ, Ագարակ, Աշտարակ և Օշական համայնքներում գործում են ջերմոցային տնտեսություններ 26900քմ. տարածքով, որտեղ մշակվում է բանջար /վարունգ, լոլիկ/ և ծաղիկ:

1.4. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2016թ. բնապահպանական ծրագրերի ֆինանսավորման հնարավորություն ունեցող համայնքներ չեն եղել: Մարզում արձանագրվել են բնապահպանական նորմերի խախտման 24 դեպք: Ըստ կազմված արձանագրությունների վերականգնվող գումարի չափը կազմում է 2.168 մլն ՀՀ դրամ: ՀՀ կառավարության 30.09.2004թ թիվ 1782-Ն որոշման պահանջներին համապատասխան յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ, ՀՀ բնապահպանության և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություններ են ներկայացվում օգտակար հանածոների երևակումների ուսումնասիրության և հանքավայրերի շահագործման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն: Վտանգավոր թափոնների վնասազերծման, պահպանման, փոխադրման աշխատանքների ուղղությամբ Աշտարակի, Ապարանի և Թալինի հիվանդանոցները պայմանագրեր են կնքել «Էկոլոգիա» ՍՊԸ-ի հետ: Վտանգավոր թափոնները վնասազրեծվում են բնապահպանական նորմերին համապատասխան: Վերոնշյալ կազմակերպությունների տնօրենների հետ տարվել են բացատրական աշխատանքներ, որպեսզի չխոչնդոտեն ‘‘Էկոլոգիա’’ ՍՊԸ-ի աշխատանքներին: Ընթացիկ տարում վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթների մասին տեղեկատվություն չի ստացվել:

Աղբահանությունը կատարվում է բնապահպանական նորմերին համապատասխան, թափոնների վերամշակում դեռևս չի կատարվում: Մարզի գրեթե բոլոր համայնքների ղեկավարները զգուշացվել են կենցաղային թափոնների գոյացման և այն սահմանված կարգով տեղափոխելու և դրանց դիմաց բնապահպանական վճարների գանձման գործընթացը կանոնակարգելու նպատակով: Սասունիկի վարչական տարածքում 8 հա տարածքով նոր աղբավայրը կառավարող կազմակերպությունը հավաստիացնում է, որ աղբը չվերամշակելու դեպքում էլ, կոչնչացվի ժամանակակից նոր տեխնոլոգիաներին համապատասխան:

Աղբահանության սխեմաներ ունեն՝ Աշտարակ քաղաքի համար «Վիկտորիա» ՍՊԸ, Ապարան քաղաքի համար՝ «Գնթունիք» ՍՊԸ, Թալին քաղաքի համար՝ քաղաքապետարանի կոմունալ բաժինը: Մարզխորհրդի նիստերում համայնքների ղեկավարներից պահանջվում է աղբահանության նկատմամբ հսկողության իրականացում,սակայն դեռևս թափոնների սխալ տեղադրման դեպքեր են արձանագրվում: Մարզի 3 քաղաքներում և խոշոր համայնքներում կատարվում են կանոնակարգված աղբահանություններ: Չարտոնագրված աղբավայրեր լիկվիդացվեցին ևս 7 համայնքներում:

Աջակցություն է ցուցաբերվել մթնոլորտային օդի աղտոտման նվազեցմանը:

Մարզում գործում են 3 ասֆալտի գործարաններ՝ «Թալինի ԱՏՃ» ՓԲԸ, «Սլոբեր» ՍՊԸ և «Աշտարակ–շին» ԲԲԸ, որոնց մոտ առկա են սահմանային թույլատրելի արտանետումների եզրակացությունները: Հաշվետու ժամանակահատվածում նոր ՍԹԱ են ձեռք բերել ևս երկու կազմակերպություն: Արձանագրվել է մթնոլորտային օդի աղտոտման 3 դեպք, տուգանքի չափը կազմում է 180 հազ. ՀՀ դրամ: Մարզի թվով 59 համայնքներում առկա են կանոնակարգված աղբավայրեր, իսկ թվով 20 փոքր համայնքներում չկան աղբավայրեր: Թվով 19 կազմակերպություն ստացել են թափոնների անձնագիր:

Անձնագրավորման ենթակա «Էկոլոգիա» ՍՊԸ-ն, որը զբաղվում է վտանգավոր թափոնների վնասազերծման հարցերով, պայմանագրային հիմունքներով աշխատում է Արագածոտնի մարզի հիվանդանոցների հետ: Նոր աղբավայրը, (որը փոխարինում է Սասունիկի աղբավայրին) արդեն իսկ իր դրական ազդեցությունն է թողել շրջակա միջավայրի վրա: Աղբավայրից օգտվում են Աշտարակի տարածաշրջանի 12 համայնքներ և 4 արդյունաբերական ձեռնարկություններ:

1.5. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Արագածոտնի մարզում գործում է 122 դպրոց, այդ թվում՝ 79-ը՝ միջնակարգ, 39-ը՝ հիմնական, 1-ը՝ հատուկ և 3 ավագ: 2016-2017 ուսումնական տարում մարզպետարանի ենթակայության 118 հանրակրթական դպրոցի առաջին դասարան է ընդունվել 1868 աշակերտ: Մարզում ձևավորվել է 1231.75 դասարան՝ 16 527 աշակերտով: Պետական ուսումնական հաստատություններին օգտագործման իրավունքով հանձնված շենքերի, համայնքային սեփականություն հանդիսացող նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերի շահագործումը ՀՀ Արագածոտնի մարզում իրականացվում է ծառայողական նշանակությամբ. այլ նպատակներով շենքերը չեն օգտագործվում: Մարզպետի կողմից չի կատարվել դպրոցական և նախադպրոցական շենքերի գույքի օտարում: 2016 թվականին ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներին պատկանող անշարժ գույքի՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչութուն հանձնելու գործընթացը շարունակվում է:

Համաձայն ՀՀ վարչապետի 16.10.2014թ. թիվ 02/23.17/16802-14 հանձնարարականի ժամանակին հավաքագրվել և **ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչութուն** է ուղարկվել մարզի հանրակրթական դպրոցների ուսուցիչների տներում բնակվող բնակիչների համապատասխան փաստաթղթերի փաթեթը՝ բնակարանների և բնակելի տարածքների նվիրատվության գործընթացը կազմակերպելու համար: ՀՀ կառավարության որոշմամբ Մաստարայի միջնակարգ դպրոցին պատկանող ուսուցչի տունը արդեն հանձնվել է բնակիչներին որպես նվիրատվություն: Հավաքագրվել և ժամանակին ՀՀ ԿԳՆ է ուղարկվել մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններին ամրացված տարածքների օգտագործման արդյունավետության վերաբերյալ տեղեկատվություն: ՀՀ Արագածոտնի մարզում գործում է համայնքային ենթակայության 36 **նախադպրոցական ուսումնական հաստատություն**, որտեղ ձևավորվել է 94 խումբ՝ 2486 երեխայով, որոնցից 18-ը ազգային փոքրամասնության/եզդի/, 4-ը՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ են: Շամիրամի հիմնական դպրոցում գործում է նախակրթարան, ուր հաճախում են եզդի երեխաներ: ՀՀ Արագածոտնի մարզում գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների բոլոր տնօրեններն ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն: Վերանորոգված նախադպրոցական ուսումնական հաստատությունները ապահովված են երեխաների տարիքային առանձնահատկություններին համապատասխանող գույքով, մեթոդական ձեռնարկներով, դիդակտիկ պարագաներով: ՀՀ Արագածոտնի մարզի 35 հանրակրթական դպրոցում գործում է **նախակրթարան**՝ 468 երեխայով, որտեղ իրականացվում է նախադպրոցական կրթություն՝ կրթական պետական չափորոշիչներին համապատասխան: Նախակրթարանները ապահովված են երեխաների տարիքային

առանձնահատկություններին համապատասխանող գույքով, մեթոդական ձեռնարկներով, դիդակտիկ պարագաներով:

Մարզի հանրակրթական 113 դպրոց ստացել է լիցենզիա: Արագածի թիվ 2, Անտառուտի, Կարինի միջնակարգ, Թլիկի, Օշականի հիմնական դպրոցների լիցենզավորման աշխատանքները ընթացքի մեջ են, կապված դպրոցների անշարժ գույքի վկայականներն առկայության հետ:

Մարզպետի կողմից տրվել է հանձնարարական կրթության վարչությանը ուսումնասիրել դպրոցների ֆիզիկայի և քիմիայի լաբարատորյաները և պարզվել է, որ կան դպրոցներ, որտեղ ամբողջովին բացակայում են լաբարատոր սարքավորումները: Արդյունքում կրճատվել է թվով 58.5 հաստիք և տնտեսվել է մոտ 50.544 հազար ՀՀ դրամ:

Նշեմ, որ մարզում կան դպրոցներ, որտեղ ուսուցիչների թիվը գերազանցում է աշակերտների թվաքանակը, ուստի առաջարկվում է, որ համայնքների խոշորացումից հետո վերը նշված դպրոցները նույնպես վերամիավորվեն:

Միավորման արդյունքում կտնտեսվի մոտ 500մլն դրամ գումար: Դպրոցների օպտիմալացումը կբարձրացնի նաև կրթության որակը, որտեղ կդասավանդեն որակյալ մասնագետներ:

1.6. ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Մարզում գործում է 61 գրադարան, որոնցից 1-ը՝ մարզային՝ ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության, 2-ը՝ քաղաքային, 58-ը՝ համայնքային: Մարզում գործում է թվով 1 թանգարան՝ Պերճ Պռոշյանի տուն թանգարանն է, որը Եղիշե Չարնցի անվան գրականության և արվեստի թանգարանի մասնաճյուղն է և գործում է մշակույթի նախարարության ենթակայությամբ:

ՀՀ Արագածոտնի մարզում գործում են 4 մարզադպրոց՝ 3 համայնքային (Ապարան, Թալին, Քուչակ քաղաքներում) և 1 մարզային ենթակայության (Աշտարակ քաղաքում):

Վերջին հինգ տարիների ընթացքում մասնակի վերանորոգվել են Քուչակի (փոխվել է դահլիճի տանիքը և մասնակի՝ դահլիճի հատակը շուրջ 5 մլն դրամ), Ապարանի (ներքին և արտաքին հարդարում, հատակի փոխում շուրջ 4.2 մլն դրամ) մարզադպրոցները, իսկ Աշտարակ քաղաքում նոր կառուցվող մարզադպրոցի աշխատանքները կավարտվեն 2017 թվականի փետրվարին *(422,3 մլն դրամ):* Թալինի մարզադպրոցում վերանորոգման աշխատանքներ չեն կատարվել:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության երեխայի իրավունքների պաշտպանության 2016 թվականի տարեկան ծրագրով նախատեսված միջոցառումների ցանկի 38 կետի համաձայն ՀՀ Արագածոտնի մարզում գործող երաժշտական և արվեստի 8 դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների ուսուցման վարձավճարների փոխհատուցման նպատակով պետական բյուջեից հատկացվել է 21 605.6 հազար դրամ՝ 81 սովորողների համար:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 121-րդ կետի 2-րդ ենթակետը և զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների, ծնողազուրկ ու սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների դպրոցահասակ երեխաների՝ 2016 թվականի ամառային հանգստի կազմակերպումն ապահովելու նպատակով՝

ՀՀ Արագածոտնի մարզի զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների, ծնողազուրկ ու սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների դպրոցահասակ 150 երեխաներ ՀՀ Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանի աջակցությամբ իրենց ամառային հանգիստը անցկացրեցին Հանքավանի «Հասմիկ» ճամբարում:

Արագածոտնի մարզը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Դա լուրջ նախադրյալ է մշակութային կյանքի աշխուժացման և տուրիզմի զարգացման համար: Մարզում առկա են 1893 պատմա-մշակութային հուշարձաններ, որոնցից 1329-ը հանրապետական և 564 տեղական նշանակության:Մարզում կա 178 եկեղեցի և 56 մատուռ: Ներկայումս ՀՀ Արագածոտնի մարզպետարանում չկան հուշարձանների պահպանական գոտիների նախագծեր, այն հանձնվել է համայնքների ղեկավարներին հուշարձանների պահպանության մարզային գործակալության ծառայության կողմից:

Պետ. բյուջեի և այլ միջոցներով 2016թ. ՀՀ Արագածոտնի մարզպետի հանձնարարությամբ և աջակցությամբ մշակվել, կազմակերպվել և իրականացվել է պետական, ազգային նշանակություն ունեցող բազմաթիվ միջոցառումներ նվիրված՝ Ամանորի և Սուրբ ծննդյան տոներին, Հայոց ազգային բանակին, Կանանց միջազգային օրվան և մայրության տոնին, Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի և Շուշիի ազատագրմանը, Ոսկե աշուն, Գիտելիքի և ուսուցչի օրվան, ՀՀ անկախության օրվան:

Մարզում գործում են ինը երաժշտական,արվեստի և գեղարվեստի դպրոցներ,որտեղ 15 մասնագիտությունների գծով /որոնցից 7-ը ժող նվագարաններ/ սովորում է 947 աշակերտ,իսկ ուսուցիչների թիվը կազմում է 106: Ստեղծված են բավարար պայմաններ երեխաների գեղագիտական որակյալ կրթության և գեղագիտական դաստիարկության կազմակերպման համար:

Մարզի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների ուումնական ծրագրերի վերաբերյալ անցկացվել են մի շարք քննարկումներ դպրոցների տնօրենների մասնակցությամբ: Դպրոցները համալրված են որակյալ բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող կադրերով: Մարզում 2016 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեի միջոցներով վերանորոգվել են.

հ.հ	**Իրականացնող մարմին**	**Մշակութային օբյեկտներ**	**Գումար**	**Ներածություն**
1.	ՀՀ մշակույթի նախարարություն	գ. Ոսկեվազ Սբ. Հովհաննես եկեղեցի	15,000.0	Աշխատանքներն ընթացքի մեջ են
2.	ՀՀ մշակույթի նախարարություն	գ. Իրինդ Սբ. Աստվածածին եկեղեցի	19,000.0	Աշխատանքներն ընթացքի մեջ են
3	ՀՀ մշակույթի նախարարություն	գ. Երնջատափ Աստվածընկալ վարք	15.000.0	Աշխատանքներն ընթացքի մեջ են
5	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	Քուչակի մշակույթի տան շինարարության ավարտում	20,000.0	Աշխատանքներն ընթացքի մեջ են: Կատարվել են նախատեսված աշխատանքների 20 %- ը

6	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	Աշտարակի մարզադպրոցի կառուցման ավարտ	52,000.0	Ըստ կապալառու կազմակերպության հայտարարության՝ աշխատանքները կավարտվան դեկտեմբերի 20-ին:

Մշակութային օբյեկտների հիմնանորոգում
2016թ.-ի ընթացքում մարզի համայնքներում ուսումնասիրվել և ճշգրտվել են առաջնահերթ հիմնանորոգման կարիք ունեցող մշակութային օբյեկտները.համապատասխան հայտ է ներկայացվել նոր մշակութային օբյեկտների կառուցման համար, որտեղ չկան մշակույթի տներ կամ ակումբներ:

1.7. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Մարզի առողջապահական համակարգում գործում են 22 բուժհաստատություններ, որոնցից 5-ը մարզպետարանի ենթակայության՝ (1-ը՝ ՊՈԱԿ, 4-ը՝ ՓԲԸ), դրանցից չորս բժշկական կենտրոն, երկու առողջության կենտրոն, 15 ամբուլատորիաներ և 1 առողջության առաջնային պահպանման կենտրոն:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ենթակայության բժշկական կազմակերպություններում 01.01.2016թ.-ի դրությամբ եղել է 800 ֆիզիկական անձ՝ 702.2 դրույքաչափով: Ազատվել կամ կրճատվել է մոտ 36 ֆիզիկական անձ կամ 64.86 դրույքաչափ: 31.12.2016թ.-ի դրությամբ աշխատում են 764 անձ՝ 637.34 դրույքաչափով: Ֆինանսական տնտեսումը կազմում է շուրջ 24.0մլն դրամ: 01.01.2017թ.-ի դրությամբ հաստիքի կրճատման մասին ծանուցվել են 127 աշխատակից: Նախատեսվում է 2017 թվականի ընթացքում կրճատել ընդհանուր առմամբ 63.93 հաստիք \որից 13.0 թափուր\, որի արդյունքում կկրճատվեն 71 ֆիզիկական անձ, ֆինանսական տնտեսումը կկազմի շուրջ 42.0 մլն դրամ:

2017 թվականին նախատեսվում է կազմակերպել առողջացման ուղղությամբ տարվող աշխատանքներ մարզի հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններում՝ Աշտարակի և Ծաղկահովիտի բժշկական կենտրոններում որտեղ նախատեսվում է իրականացնել շենքային պայմանների և հաստիքների օպտիմալացում, Թալինի բժշկական կենտրոնում վարչատնտեսական մասի մոտ 30%-ի կրճատում:

Փոխել «Ծաղկահովիտի» ԲԿ-ի կարգավիճակը՝ բժշկական կենտրոնի վերակազմակերպում առողջության կենտրոնի, մահճակալների զբաղվածության թերծանրաբեռնվածության հետևանքով ծրագրվել է մասնակի փակել ստացիոնար ծառայությունները, թողնել միայն սոմատիկ բաժանմունքը, կահավորված և սարքավորումներով հագեցված վիրակապարան և մանկաբարձական սենյակ: Ստեղծել ուժեղացված և հագեցված շտապ բժշկական օգնության ծառայություն:

Ծաղկահովիտի համայնքապետի նախնական պայմանավորվածության համաձայն ակնկալվում է նաև ծագումով Ծաղկահովիտ համայնքի՝ ներկայումս Ռուսաստանի Դաշնության բնակիչ բարերարի ներդրումը բժշկական կենտրոնի հիմնովին վերանորոգման և

վերազինման համար: Նախատեսվող բարեգործության ծավալը և արժեքը կքննարկվի բարերարի այցի ժամանակ 2017 թվականի մարտ ամսին:

“Աշտարակի բժշկական կենտրոն” ՓԲԸ-ում նախատեսվում է շենքերի և կադրերի օպտիմալացման աշխատանքներ: 2017 թվականի ընթացքում վերանորոգման աշխատանքների համար ներդրման ծավալները և արժեքը քննարկման փուլում է:

Բուժհիմնարկների 2016 թվականի գլոբալ բյուջեն կազմել է 1 617 755 400 ՀՀ դրամ, որից ամբուլատոր ծառայության գծով 1 101 278 100 ՀՀ դրամ, հիվանդանոցային ծառայության գծով 516 477 300 ՀՀ դրամ: Այն 2015 թվականի համեմատ աճել է 2.5%: 2016 թվականի 12 ամսվա դրությամբ մարզի բուժհիմնարկների կատարողականը կազմում է մոտ 1 545 360 000 ՀՀ դրամ: Մարզպետարանի ենթակայության բժշկական կազմակերպություններում 2016 թվականի ընթացքում վճարովի ծառայության և այլ մուտքերը կազմել են 105 618 300 ՀՀ դրամ:

2016թ. ընթացքում մարզի ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններ հաճախումների թիվը կազմել է 294957, որից 213547 0-18 տարեկանների, տնային կանչերի թիվը 15612, որից 0-18 տարեկանների 13356, տնային ծնունդները 0:

<u>Սոցիալական ապահովություն.</u> Մարզում բնակվում են **18552** կենսաթոշակառուներ, **237**զոհված և **196** վիրավոր ազատամարտիկների ընտանիքներ, **635** փախստական ընտանիքներ՝ 1551 անձով: 1988թ.-1994թ. Ադրբեջանից բռնագաղթված և մարզում բնակություն հաստատած կարիքավոր փախստական ընտանիքների համար 2001-2007 թթ. ընթացքում միջազգային կազմակերպությունների կողմից կառուցվել են 152 քոթեջներ՝ 287 բնակարաններով և 2 բազմաբնակարան շենք՝ 40 բնակարանով: Մարզում բնավող, փախստականի կարգավիճակ բնակարանի կարիք ունեցող անձանց թիվը ճշտվել է և ՀՀ կառավարություն է ներկայացվել 97 ընտանիքի ցուցակ:

2016 թ. ըստ տարածաշրջանների խոցելի խմբերի պակերը հետևյալն է.

	Աշտա-ռակ	**Ապա-ռան**	**Թալին**	**Արա-գած**	**Ընդա-մենը մարզում**
ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը 2015թ.	**2860**	**795**	**1490**	**614**	**5759**
ընտանեկան նպաստ ստացող ընտանիք. թիվը 2016թ./նոյեմ. 1-ի դրությամբ/	**2771**	**830**	**1465**	**587**	**5653**
գրանցված գործազուրկների թիվը 2015թ.	**1823**	**501**	**466**	**475**	**3265**
գրանցված գործազուրկների թիվը 2016թ. ./նոյեմ. 1-ի դրությամբ/	**1931**	**987**	**903**	**555**	**4376**
Աշխատանք փնտրողներ 2016թ. ./նոյեմ. 1-ի դրությամբ	**2661**	**1146**	**1151**	**773**	**5731**

Մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «այլ նպաստներ բյուջեից» հոդվածով սոցիալական աջակցության նպատակով նախատեսված 30 մլն դրամ ֆինանսական միջոցները մարզպետի որոշումներով կտրամադրվի մարզի 114 համայնքների սոցիալապես անապահով ընտանիքներին:

ՀՀ կառավարության կողմից ՀՀ Արագածոտնի մարզի սոցիալապես անապահով ընտանիքներն տրամադրվել է DVB-T2 ստանդարտի 5591 հատ թվային հեռուստատեսային ընդունիչ սարքեր, որոնք բաշխվել են ըստ տարածքների՝

N	Անվանում	Միավոր
1	Աշտարակի ՍԱՏԳ	2754 հատ
2	Ապարանի ՍԱՏԳ	806 հատ
3	Ծաղկահովիտի ՍԱՏԳ	595 հատ
4	Թալինի ՍԱՏԳ	1436 հատ

Բաժնի կողմից միջազգային բարեգործական կազմակերպությունների օժանդակությամբ իրականացվել է 3 ծրագիր /1500 շահառուներ/: Փյունիկ, Սատար,Շողիկ,Լայթ-Հաուս,Հանգրվան ՊՈԱԿ-ից և այլ բարեգործական կազմակերպություններից բերվել է 50 ականջակալ, 93 հատ հենակ , 4 սայլակ և 3 քայլակ և այն տրամադրվել է ծեր և հաշմանդամ քաղաքացիներին:

900 սոցիալապես անապահով ընտանիքների հատկացվել է նոր և օգտագործված հագուստ:

2016թ. մարզում գործազուրկների մասնագիտական ուսուցման և վերամասնագիտացման նպատակով կազմակերպվել են տարբեր դասընթացներ, որոնցում ընդգրկվել է 40 մարդ:

1.8. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Ստորև ներկայացված են 2016-2017թթ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներից մարզպետարանին և մարզային ենթակայության կազմակերպություններին ֆինանսավորված և 2017թ.-ին նախատեսված գումարները.

Անվանումը	2016թ. ֆինանսավորում (հազ. դրամ)	2017թ. նախատեսված(հազ. դրամ)	2017թ. ֆինանսավորում (հազ. դրամ)
Արագածոտնի մարզպետարան աշխատակազմի պահպանում	460 913,1	454 580,7	52 340,4
Հանրակրթական ուսուցում	4 586 984,6	4 587 370,3	4 417 450,7
Ներառական կրթություն	8 074,8	23 093,9	358,8
Հատուկ կրթություն	68 491,5	85 792,5	7 763,3
Արտադպրոցական դաստիարակություն	24 103,5	24 134,0	2 147,9
Նախադպրոցական (կրթություն)	61 288,2	61 077,3	5 306,9
Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցման վարձավճարի փոխհատուցում	21 605,6	21 605,6	1 801,4
Մանկավարժների և դպրոցական երեխաների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում	1 700,0	1 700,0	0,0
Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում	1 554,7	1 797,1	0,0
Մշակութային միջոցառումների իրականացում	3 278,2	3 278,2	180,0
Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում	0,0	17,8	0,0
Կրթական օբյեկտների հիմնանորոգում	2 078,4	0,0	0,0

ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից	205 198,4	0,0	0,0
Մարզային նշանակության ա/ճ-ների ընթացիկ ձմեռային պահպանում և շահագործում	101 889,7	127 815,0	0,0
Պետական նշանակության ա/ճ-ների հիմնանորոգում	0,0	0,0	
Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարում	1 800,0	1 200,0	150,0
Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին	83 537,0	0,0	0,0
Բնակարանային շինարարություն	12 154,5	68 829,9	0,0
Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին	18 000,0	0,0	0,0
Ընդամենը	***5 662 652,2***	***5 462 292,3***	***4 487 499,4***
Դոտացիա	***2 413 047,5***	***2 428 020,4***	***202 360,5***
Պետական հիմնարկների աշխատողներին սոցիալական փաթեթից օգտվողներին հատուցում	**208 278,3**	**221 616,0**	**618,0**
Ընդամենը	**8 283 978,0**	**8 111 928,7**	**4 690 477,9**

2016 թվականի տարեկան ծրագրով մարզի համայնքների բյուջեներով նախատեսված 1 019 183,1 հազար դրամ սեփական եկամուտների դիմաց 25.12.2016թ. դրությամբ փաստացի հավաքագրված եկամուտները կազմել են 1 018 861,3 հազար դրամ, կամ սեփական եկամուտների առաջադրանքը կատարվել է 100 %-ով:

Նախորդ տարվա նույն ժամանակշրջանի համեմատությամբ սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը ավելացել է 4.2 %-ով, կամ հավաքագրման մակարդակը ավելացել է 41 469,5 հազար դրամ:

2016 թվականի տարեկան ծրագրով մարզի համայնքների բյուջեների եկամուտներում նախատեսված 344 940,9 հազար դրամ հողի հարկի դիմաց փաստացի հավաքագրվել է 326 009,1 հազար դրամ, կամ հավաքագրման մակարդակը կազմել է 94.5%:

Հողի հարկի հավաքագրման փաստացի աճի մակարդակը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի փաստացիի համեմատությամբ պակասել է -1.9 %-ով, կամ հավաքագրման մակարդակը պակասել է 6 245,9 հազար դրամ:

2016 թվականի տարեկան ծրագրով մարզի համայնքների բյուջեների եկամուտներում նախատեսված 414 802,0 հազար դրամ գույքահարկի դիմաց փաստացի հավաքագրվել է 434 138,3 հազար դրամ, կամ հավաքագրման մակարդակը կազմել է 104.7 %:

Գույքահարկի հավաքագրման փաստացի աճի մակարդակը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի փաստացի համեմատությամբ ավելացել է 8.1 %-ով, կամ հավաքագրման մակարդակը ավելացել է 32 760,0 հազար դրամ:

1.9. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՀՀ Արագածոտնի մարզում գրանցված են ավելի քան 4211 գործող (ակտիվ) ձեռնարկություններ, որոնք կազմում են հանրապետության մարզային ցուցանիշի մոտ 6.9%-ը, այդ թվվում՝ շուրջ 77 արտադրական ձեռնարկություններ և 562 առևտրային կազմակերպություններ: Խոշոր արտադրական ձեռնարկություններից են «Հայասի գրուպ» ԲԲԸ, «Թամարա Ֆրուտ» ՓԲԸ, «Աշտարակյան գինիներ» ՓԲԸ, «Գրեյդ Վելլի» ՓԲԸ, «Աշտարակի պոլիգրաֆիական գործարան» ԲԲԸ, «Աշտարակ-ձու» ՓԲԸ, «Ապարանի պանրի գործարան» ՓԲԸ, «Աշտարակ-կաթ» ԲԲԸ, «Գոլդեն գրեյպ Արմաս» ՍՊԸ և «Գնթունիք» ՍՊԸ: Ձեռնարկությունների խտությունը 10 000 բնակչի հաշվով կազմում է 324.4:

ՀՀ Արագածոտնի մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են:

2015թ.-ի ընթացքում թողարկվել է 25,7 մլրդ.դրամ (ընթացիկ գներով) արդյունաբերական արտադրանք, որը կազմել է հանրապետությունում արտադրված արտադրանքի 1.9%-ը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համադրելի գներով համեմատելիս նվազման տեմպը կազմել է՝ 4,2 մլրդ.դրամ կամ 14.1%: Ընդհանուր առմամբ վերջին հինգ տարիների ընթացքում մարզում արտադրված արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռները կազմել է հանրապետությունում արտադրված արդյունաբերական արտադրանքի 1.7-2.3%-ը:

2015թ.-ի ընթացքում թողարկվել է 100,0 մլրդ.դրամ (ընթացիկ գներով) գյուղատնտեսական արտադրանք, որը կազմել է հանրապետությունում գյուղատնտեսական արտադրանքի 10.0%-ը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համադրելի գներով համեմատելիս աճի տեմպը կազմել է՝ 1,2 մլրդ.դրամ կամ 1.2%: Ընդհանուր առմամբ վերջին հինգ տարիների ընթացքում մարզում արտադրված գյուղատնտեսական արտադրանքի տեսակարար կշիռները կազմել է հանրապետությունում արտադրված գյուղատնտեսական արտադրանքի 9,7-10.2%-ը:

2015թ.-ի ընթացքում կատարվել է 17 963,3 մլն.դրամ (ընթացիկ գներով) շինարարություն, որը կազմել է հանրապետությունում շինարարության 3.7%-ը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համադրելի գներով համեմատելիս աճի տեմպը կազմել է՝ 4 589,4 մլն.դրամ կամ 25,5%: Ընդհանուր առմամբ վերջին հինգ տարիների ընթացքում մարզում շինարարության տեսակարար կշիռները կազմել է հանրապետությունում շինարարությունի 2,6-4,9%-ը:

2015թ.-ի ընթացքում կատարվել է 16 778.8 մլն.դրամ (ընթացիկ գներով) մանրածախ առևտուր, որը կազմել է հանրապետությունում մանրածախ առևտուրի 1.3%-ը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համադրելի գներով համեմատելիս նվազման տեմպը կազմել է՝ 237,4 մլն.դրամ կամ 1.4%: Ընդհանուր առմամբ վերջին հինգ տարիների ընթացքում մարզում մանրածախ առևտուրի տեսակարար կշիռները կազմել է հանրապետությունում մանրածախ առևտրի 1.2-1.5%-ը:

2015թ.-ի ընթացքում մատուցվել է 9 185,0 մլն.դրամ (ընթացիկ գներով) ծառայություններ, որը կազմել է հանրապետությունում ծառայությունների 0,8%-ը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համադրելի գներով համեմատելիս աճի տեմպը կազմել է՝ 312,3 մլն.դրամ կամ 3,5%: Ընդհանուր առմամբ վերջին հինգ տարիների ընթացքում մարզում

ծառայությունների տեսակարար կշիռները կազմել է հանրապետությունում ծառայությունների 0.8-1.0%-ը:

Մարզի արդյունաբերական ձեռնարկություններում, առևտրի և սպասարկման ոլորտի կազմակերպություններում 2016թ. դրությամբ աշխատում է շուրջ 1894 մարդ, որից արդյունաբերության ոլորտում զբաղվածների թիվը կազմում է շուրջ 1186 մարդ, իսկ առևտրի և սպասարկման՝ շուրջ 708 մարդ:

Փոքր և միջին բիզնեսին աջակցելու նպատակով 2016թ.-ի ընթացքում ֆինանսական աջակցություն են ստացել առավել իրատեսական գործարար ծրագրեր ներկայացրած 8 սկսնակ գործարար: Ստացված վարկերի ընդհանուր գումարը կազմել է մոտ 33 մլն դրամ: Ֆինանսական աջակցությունը տրվել է Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ հիմնադրամի կողմից:

ՀՀ Արագածոտնի մարզի զբաղվածության կենտրոններում 2016թ.-ի հունվարի 1-ի դրությամբ գործազուրկների թիվը կազմում է 3,460 մարդ, որոնցից (տղամարդիկ՝ 1 381 կամ 39,9%, կանայք՝ 2 079 կամ 60,1%):

ՀՀ Արագածոտնի մարզում 2015թ-ին գործազրկության մակարդակը կազմում էր 5,7%, որը հանրապետական միջին ցուցանիշից ցածր է 12,8%-ով, (քաղաքային՝ 9,6%, գյուղական՝ 4,7%):

Տվյալները ցույց են տալիս, որ զբաղվածության մակարդակը զգալիորեն բարձր է 4,9%-ով քաղաքային համայնքներում: Արագածոտնի մարզում զբաղված բնակչության 63.6%-ը բնակվում է գյուղական համայնքներում: